

զի այս եւս ոչ ունի գիր վկայական ոչ քահանայութեան եւ ոչ եպիսկոպոսութեան։

Սարգսի այս երկրորդ անգամ Հռոմ գրտնուելուն՝ նոյնպիսի դէպք մը հանդիպեցաւ, եւ Սարգիս յերեւան հանեց խարդախութիւնը։ Այսպէս Յովսէփ Եպ. Եղեւսիոյ, Չեռնադրիչն ի Հռոմ, 13 Դեկտ. 1753ին կը գրէ ի Լիբանան Հ. Ռափայէլ Մեծաւոր Ա.ին (Դիւ. Անտ.). «... Եկն եհաս ի Հռոմ ոմն ստամպօլցի հափեղայ որ ասէր զինքենէ ի Էնկիւրայ վանքն լեալ քահանայ եւ ապա գնացեալ Էջմիածին ի Ղազարէ ձեռնադրեալ եպիսկոպոս. բայց ոչ գոյր ընդ նմա վկայական, այլ միայն երկու փոքր գիր մին Թոխաթու առաջնորդէ եւ միւսն Էրզրումու առաջնորդէ, որք յիշեն Եղիազար հափեղայս աղքատ գոլով տուաք հրաման մուրալոյ, եւ յետ երից աւուրց քննելոյ մերոյ խոստովանեցաւ յայտնապէս թէ ոչ է եպիսկոպոս, եւ ոչ Էջմիածին գնացեալ եւ ոչ է եւս ուղղափառաց արձակումն առեալ, եւ այժմ աւելի քան 15 աւուրս որս ի Հռոմ հասեալ է, ոչ գնաց դաւանութիւն հաւատոյ տալ ի սանդուֆիցիօն եւ ոչ խոստովանութիւն եւ ոչ պատարագ ասաց։ Արդ սա կամք ունի դռնալ յարեւելս, վասն այսորիկ գրեցի ձեզ զնմանէ զի մի ոք ի նմանէ խափիցի. հասակաւ միջակ պոյիւ է, սեւամօրուս իբր 33 ամեայ, ստամպօլցի, սամաթիայու սամթէ, լաթերով սատանայ, Տէր Մովսէսի աղջնի տղան է, եւ ժամանակ մի Անկիւրոյ վանքն կացեալ է. սա իբրեւ եպիսկոպոս եմուտ ի Հռոմ, մօռ սգեստիւ եւ խաչ ի պա-